# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 109-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ, 67-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 32-Ն և N 33-Ն որոշումները, համայնքային սեփականության իրավունքի վկայականները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել կատարելու համայնքի վարչական տարածքում գտնվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ-վաճառք կառուցապատման նպատակով՝ համապատասխան մեկնարկային գներով, 15000 դրամ աճուրդի մասնակցության վճարով և մեկնարկային գնի 5% քայլի չափով.
   1.1 Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի տարածքում գտնվող, 06-060-0212-0051 ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության 0.0229 հա մակերեսով հողամասը՝ գյուղ. արտադրությամբ զբաղվելու համար, 57250 դրամ մեկնարկային գնով:
   1.2 Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի տարածքում գտնվող, 06-060-0212-0049 ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության 0,67659 հա մակերեսով հողամասը՝ գյուղ. արտադրությամբ զբաղվելու համար, 1691500 դրամ մեկնարկային գնով:
2. Վերը նշված հողամասերի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:
3. Բոլոր վճարումները կատարել ՀՀ արժույթով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 110-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ (06-0022-0101-0086-01 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 35-Ն որոշումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել կատարելու համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնքի Աքորի գյուղի «տափի դուզ» կոչվող տեղամասում գտնվող (06-0022-0101-0086-01 ծածկագրից առանձնացված) 0.5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ:
2. Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 12000 դրամ, սահմանել՝ մրցույթի մասնակցության վճար 15000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3. Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 111-Ա

### ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 6 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի 1-ԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻՑ 150.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 42-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 31-Ա որոշումը, համայնքային սեփականության իրավունքի վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող՝«Ալավերդու քաղաքային համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին հարկից անհատույց օգտագործման իրավունքով, 10 /տասը/ տարի ժամկետով, «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամին որպես երեխաների ցերեկային խնամքի կենտրոն օգտագործելու համար տրամադրել 150.4 քմ մակերեսով տարածք՝ համաձայն հատակագծի:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար Կարեն Կոնիջյանին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 112-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԳՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 34-Ն որոշումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել կատարելու համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնքի Կաճաճկուտ գյուղի վարչական տարածքում գտնվող (02-054-0115-0001 ծածկագրից առանձնացված) 1.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (պտղատու այգի) նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ:
2. Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 20000 դրամ, սահմանել՝ մրցույթի մասնակցության վճար 15000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3. Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 113-Ա

### ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 30-Ա որոշումը, «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի տնօրենի 10 սեպտեմբերի 2019թ. N 110 գրությունը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Աքորի գյուղի «տափի դուզ» կոչվող տեղամասում գտնվող (06-0022-0101-0086-01 ծածկագրից առանձնացված), 1.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, 10 /տասը/ տարի ժամկետով տրամադրել «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին գործնական աշխատանքներ իրականացնելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար Կարեն Կոնինյանին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 114-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԻԼՈՍԻ ՀՈՐԸ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.04.2020թ. N 36-Ա որոշումը, հաշվի առնելով, որ անշարժ գույքի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. N 51 որոշումով չի փոխանցվել Աքորի գյուղական համայնքին, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Աքորի, փողոց 4, N 21 հողամասում գտնվող (ծածկագիր՝ 06-022-0038-0001-ից առանձնացված) սիլոսի հորը ընդգրկել Ալավերդի համայնքի հաշվեկշռում:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ կատարելու շինության սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. մայիսի 08
ք. Ալավերդի